նելով. «Ես Մարտիրոս Կաթուղիկոս Աղթամարու, յառաջ քան զայս վասն Վանայ, Բաղէշու, Մշու, և այլոց շրջակայից յաղագաւ, որոց զնուիրակութիւնն էջմիածին առնոյր, Ֆարման հանի յԱրքայէն՝ թէ էջմիածին ի յիշխանութիւնս պարսից է, և այս երկրաց զարդիւնսն ժողովեալ տանի յերկիրն պարսից, հրաման լիցի զի Աղթամար կերիցէ, որովհետև ի յիշխանութիւնս Օսմանցւոց է։ Ապա յետոյ Վանայ Առաջնորդ Պօղոս Վարդապետն ընդ իս դաւ յարոյց և վկայս երեր ի դատարանի՝ թէ այդ վիճակքդ եssի ֆիլիսային են և ո՛չ Աղթամարու։ Եւ յետ խօսակցութեանց, ապա ի Պօղոս Վարդապետէն ես Մարտիրոս Կաթուղիկոս առի Ռպխը ղրչ., և զայս գիրս ետու, որ այսուհետև եթէ ես ձեռնամխիլ կամիցիմ այսց վիճակաց բալպիս լինիմ և յանցաւոր» (1661)(1)։

Յաջորդ տարին Աղթամարի կառավարիչը, Ապտուլլա Չելեպի խնդիր կը յարուցանէ Պօղոս Վարդապետին և Վանի հայ իշխաններուն դէմ, ըսելով. «Աղթամարի Կաթողիկոսին համար ես այսքան դրամ ծախսեցի և Ֆարման բերել տուի, որպէս զի ան տիրէ այս վիճակներուն և տարեկան 3000 ստակ տայ Վանի բերդին և 10.000 ստակ՝ ինծի։ Այժմ, որովհետեւ դուք տիրեցիք վիճակներուն, եssի ֆիլիսեի

(1) Զամբռ. 93—94։